խիստ բաղձալի եւ բոլոր պետութիւնների շահերին համապատասխան Փոքր Ասիայում կենսունակ թիւրք սուլթանի պահպանութիւնը: Իմիրը Իտալիային կցելու դէպքում, ապագայ Թիւրքիան զուրկ կը մնայ լաւ սարքաւորուած եւ բոլորովին պատրաստ նաւահանգիստից, որ չի կարող չանդրադառնալ նրա բոլորովին ինքնուրոյն տնտեսական կեանքով ապրելու կարողութեան վրայ: Մնալով առանց ծովային ելքի, Թիւրքիան դատապարտուած կը լինի խամրելու, եւ այս դէպքում մենք չենք կարող անտարբեր մնալ դէպի այդ մեռնող պետութեան ճակատագիրը եւ հարկադրուած պիտի լինենք ներկայացնել մեր բաղձանքները Փոքր Ասիայի կազմակերպութեան բովանդակ ծրագրի վերաբերութեան մասին,— մի բան, որից ամէն կերպ կ'ուզենք խուսափել». (263–61):

8–21 Դեկտ. արտաքին գործոց նոր նախարար Ն. Պոկրովսկին հեռագրում է Լոնտոնի դեսպանին.

«Պոլսի ու Նեղուցների հարցը մեր օգտին լուծուելուց եւ հայկական շրջանները մեր կողմից գրաւուելուց յետոյ, Փոքր Ասիայի ապագայ կազմակերպութեան խնդիրը առաջնակարգ նշանակութիւն է ստանում է մեզ համար: Ուստի եւ պէտք է ստեղծենք այնտեղ այնպիսի դրութիւն, որ կատարելապէս ապահովուին մեր ռազմագիտական եւ քաղաքա–տնտեսական շահերն ու հեշտացուի մեր ապագայ ամրացումը Փոքր–Ասիայում:

Այս տեսակէտից, մեր այդ շրջանում ունեցած շահերին չի համապատասխանում մեր ապագայ փոքր–ասիական սահմաններին կից եւրոպական որեւէ մեծ պետութեան հաստատումը, թէկուզ այժմ եւ մեզ բարեկամ լինի այդ պետութիւնը: Մեզ համար էականօրէն անհրաժեշտ է պահպանել Փոքր–Ասիայում քաղաքականօրէն եւ տնտեսականօրէն մեզ ձրգտող անկախ թիւրքական մի պետութիւն, որքան կարելի է, աւելի մեծ սահմաններով: Եւ այդ պետութիւնը պէտք է լինի այնքա՞ն կենսունակ, որ մօտիկ ապագային հեշտ աւարի ու պառակտումի զոհ չդառնայ շրջապատող հարեւան պետութիւնների միջեւ:

Այս նկատումներով պէտք է թիւրք պետութեան համար ապահովել ազատ ծովային ելքեր եւ պահպանել օսմանեան մեծամասնութեամբ բնակեցուած շրջանները: Սրա հետեւանքով իտալական տիրապետութեան ընդարձակումը Իմիրի ուղղութեամբ մեզ համար հանդիսանում է անընդունելի: Նա մեզ համար ցանկալի չէ եւ այն պատճառով, որ իտալական կալուածները կը մօտենան Նեղուցների շրջանին: Ծայրայեղ դէպքում մենք կարող էինք համաձայնուել միայն, որ նրանց տրուի Սկալա–Նուովան, Սամոս կղզու դիմաց, եւ սահմանը քաշուի այս կէտից դէպի Գոնիա: Իսկ ինչ վերաբերում է նրանց բաղձանքներին այս գծից դէպի հարաւ, մենք պատրաստ ենք պաշտպանել Ֆրանսայի եւ Անգլիայի տեսակէտը՝ արդէն մեր միջեւ կայացած համաձայնութեան հիման վրայ». (281–82):

Նոյն մտքերին հանդիպում ենք եւ ռուս դիւանագիտական նախարարութեան 1916 թ. 24 Մարտ գրութեան մէջ, որով հիմնաւորուում են Ռուսաստանի ռազմագիտական ձգտումները Փոքր–Ասիայում:

«Եթէ,— գրում է զօր. Բելեայեւը,— Ֆրանսայի թափանցումը Սիւրիայի շրջանը եւ Սրվազից հարաւ գտնուող վայրերը ռազմաքաղաքական տեսակէտից չի կարող մեր կողմից պաշտօնական առարկութիւններ առաջ բերել, որովհետեւ այդ շրջանները ամէն տեսակէտից ձգտում են դէպի Միջերկրական ծով, Ֆրանսացիների ամրացումը Սեւ ծովի կողմն ընկած շերտում պէտք է ընդունել անբաղձալի, իսկ ապագայում, գուցէ, եւ վտանգաւոր:

Նեղուցների մեր կողմից գրաւուելուց յետոյ Սեւ ծովը փաստօրէն կը դառնայ ռուսական ծով, եւ թոյլ տալ, որ եւրոպական մի մեծ պետութիւն այնտեղ ունենայ առանձին շահեր՝ հաղիւ թէ կարող է համապատասխանել ռուսական շահերին:

Զինուորական տեսակէտից, Ռուսաստանի համար թերեւս աւելի ձեռնտու կը լինի, Թիւրքական կայսրութեան փլուզումից յետոյ, սահմանակից լինել թոյլ Թիւրքիայի եւ նրանից բաժանուած նրա նախկին նահանգների հետ:

Եթէ այդ բանը քաղաքական այս կամ այն նկատումով հնարաւոր չէ, աւելի ձեռնտու է, ըստ կարելւոյն, սահմանափակել եւրոպական